

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшахъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորութիւնը բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«Մշակ» վեց ամսվա գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը ՎՅՑ ռուբլի. մէկ ամսվա-
նը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 ռուբլար,
Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կայտարարութեան ուղիւ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել Տեղեկատու հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Ի Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Ի Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերահսկող հաստատութիւններ. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ, Նամակ Կարօյց. Ներքին
Լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գե-
րանսիայից. — Արտաքին լուրեր. — ԽԱՆԻ ԼՈՒ-
ՐԵՐ. — ՀՆՈՒԱԳՐՈՒՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հացի կտոր:

ՎԵՐԱՀԱՅՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ յուլիսի 1-ից սկսում է գործել
մի նոր հաստատութիւն, որի գործունէութեան
շրջանի մէջ մտնում են ամբողջ
Եւրոպական Ռուսաստանը, իսկ Անդրկով-
կասիան Նախադեմերից միայն Բագուի նա-
հանգը: Այդ նոր հաստատութիւնն է՝ գոր-
ծարանների վրա հսկող վարչութիւնը, որի
կենտրոնական մարմինը կը լինի Պետեր-
բուրգում: Ֆինանսների միւնիստրի նախա-
գահութեան ներքոյ Բագուի նահանգը
մտնող ձեռք է ընդցակի մէջ այն պատճառով,
որ նա պարունակում է իր մէջ շատ գոր-
ծարաններ, մեքենաներ և մշակներ: Յի-
րաւի, Բագուի նահանգում գոյութիւն ու-
նեն 289 գործարան, 7000 բանւորով և
707 շոգեկաթսաներով, մինչդեռ ամբողջ
Եւրոպական Ռուսաստանում հաշւում են
ընդամենը 20,000 գործարան 1,400,000
բանւորով և 32,500 շոգեկաթսայով:

Ինչպէս յայտնի է, արդէն 17 տարի
կայ, որ գոյութիւն ունի գործարանական
վերատեսչների պաշտօնը: Բայց այդ վե-

րատեսչները մինչև այժմ գործում էին
մէկը միւսից անկախ, առանց հաստատ
հրահանգների և շատ անգամ ծանրա-
բեռնված այնպիսի մեծ գործով, որ իրա-
պէս դժուարացնում էր նրանց աշոյղ գոր-
ծունէութիւնը: Այժմ որոշված է աւել-
ացնել վերատեսչների թիւը դարձեալ
80 հոգով և հասցնել մինչև 251-ի, այն-
պէս որ իւրաքանչիւր վերատեսչի ձեռքին
լինի միջին թվով 80 գործարան:

Մեր ընթերցողներին յայտնի են այն
տխուր նկարագիրները, որ արեց բժիշկ
Բերտենսոն Բագուի մշակ գասակարգի վե-
րաբերութեամբ: Նոյնը կրկնեցին և հաս-
տատեցին մայիս ամսին Բագուի նաւթա-
գործների ժողովի մէջ գեկուցում կարգա-
ցողները: Թէ աշխատող գասակարգի կեան-
քի բարւոքման հարցերը և թէ գործա-
րանների մէջ տեղի ունեցող տենդիկական
խնդիրները պէտք է կազմեն վերատեսչ-
ների անմիջական հոգածութեան առար-
կան: Իսկ այն գանգատները, որոնք
տրվում են գործարանատէրերի կողմից,
պէտք է ընկնեն առանձին ատեաններում,
որոնց մէջ կը նախագահի տեղական նա-
հանգապետը, իսկ կը մասնակցեն փոխ-
նահանգապետը, նահանգական գաւառա-
նի պրօկուրօրը, ժանդարմների գլխավորը,
գործարանական աւագ վերատեսչը, նա-
հանգական լեւնային ինժեները և չորս
ներկայացուցիչ գործարանատէրերի կողմից:
Այդպիսով այն վերահսկողութիւնը, որ

1882 թուին սկսվեց իրեն նախնական
փորձ և վերաբերում էր միայն անչափա-
հասների և կին-բանուորների պաշտպա-
նութեան, կամաց-կամաց զարգանալով և
ընդարձակվելով, դարձաւ պետական լուրջ
մի հաստատութիւն, որին վիճակված է
կատարել մեծ դեր գործարանական կեան-
քի բարեփոխութեան գործում: Իսկ բա-
րեփոխութիւններ անելու համար, անկաս-
կած, և ինքը հաստատութիւնը միշտ
պէտք է պատրաստ լինի բարեփոխութիւն-
ների մտցնել նոյնպէս իր կազմակերպու-
թեան մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Մեր գիւղը հարստանալով է անդադար.
լուծը գնալով անտանելի է դառնում, և գիւ-
ղացին—նա էլ մարդ է, գոյութեան կուրի մէջ
իր համար տեղ գրաւել է ուղում—թողնում է
իր դաշտն ու այգին և գնում է քաղաք, որպէս
զի գոնէ այնտեղ մի կտոր հաց աշխատելու
համար գտնէ: Իդուր մենք կարծում ենք թէ արեւ-
տեսական կեանքի առաջադիմութիւնը գիւղա-
ցուն բաւականաչափ միջոց կը տայ անկախ
աշխատանքով բարեկեցութեան իր կացութիւնը,
ազատվելու իր բոլոր հիւսիքներ ծծող վաշխա-
ռութիւնից: Բանից դուրս է գալիս, որ այդ
թէօրիան սխալ է, որ անտեսական առաջադի-
մութեան իւրաքանչիւր նոր քայլ բերում է իր
հետ և հարստանալութեան նոր եղանակ: Ճա-
նապարհորդ է, որ գիւղացու կողմից երբեք չը
պիտի հեռանան ուժեղի, կեղեքողի փախուժ-
քան էլ այդ գիւղացին հարստանալու շատ
հնարաւորութիւն ունենայ: Վերջինքը օղեգոր-
ծութիւնը Գիւղական տնտեսութեան մէջ պա-
կաս նշանակութիւն չունի այս արդիւնաբո-
րութիւնը, որ գնալով զարգանում է և բարձ-
րացնում է թիւի գինը: Կարելի էր յուսալ, որ
թիւի այդպիսի այս պատճառով կը դառնան
գիւղացու եկամուտի մի շուշափիկ աղբիւր:
Բայց անտեսական այս նոր հանգամանք իս-
կայն առաջ է բերում խեղդողական մի նոր մի-
ջոց, որ նկարագրում է «Тифлисский источник»
լրագրի թղթակիցը: Գործողութեան տեղը Շու-
շու գաւառի Թաղավար գիւղն է, Վարանդայ
կոչված գաւառամասում, որը, թղթակցի տեղով,
շրջակայ գաւառների շտեմարանն է իր հացի

առատութեամբ: Այդտեղ կայ և բաւական մեծ
չափով օղեհանութիւն. եօթը, ութ տարվայ
ընթացքում նա համարեա կրկնապատիկ մեծա-
ցել է. գիւղացիները բաժնետիրական սկզբունքով
ընկերութիւններ են կազմում և օղի են քա-
շում: Աւելի լաւ գրութիւն հազիւ թէ կարելի
լինի ենթադրել: Բայց այդպէս է արտաբերու-
ման Գիւղական ընկերութիւնները նոյն հարստա-
նական հիմքերի վրա են հիմնված, ինչպէս
ոչ-գիւղական ընկերութիւնները: Ընկերութիւն-
ներ հիմնել կարող են, ի հարկէ, միայն ունե-
ւորները. իսկ դրանք թէ առանձին-առանձին,
թէ ընկերովի, իրանցից թողելի հիւսիքը ծծե-
լով են ապրում: Եւ ահա այսպէս են այդ օղե-
հանները արժողութիւնից զրոյս թիւի այգիները:
Նրանք դեռ փետրվար և մարտ ամսին են առ-
նում այն բոլոր թուրքը, որ այդպիսիք պիտի
տան ամառը: Գիւղացին, այդ ժամանակ ստա-
նալով փողը, իսկայն ծախում է, վճարելով 20
—25%—ով վերցրած պարտքը, հարկերը: Բայց
այդտեղից և գնողի մէջ կայ այն պայմանը, որ
եթէ այդպիսիք միասին կարկուտից կամ մի
այլ պատճառից, այդ դէպքում այդտեղից պիտի
վերադարձնէ գնողին իր ստացած փողի մի
շալտնի տոկոսը: Ահա այստեղ է այն թիւը, ո-
րով գնողը խեղդում է ծախողին. այդ տեսակ
պայմանագրերը գիւղացուն տնաքանդ է անում:
Հէնք որ տեղի է ունենում մի ամենափոքրիկ
քնական պատահար, որից այդին ոչինչ մնա-
լէ ստանում, առնողները հաւաքում են բարե-
խիղճ մարդկանց և տանուտէրի ու այգետիրը
հետ գնում են միասինը հաշուելու:

Շնորհիւ այն հանգամանքի, որ օղեհանը
հարուստ է իսկ գիւղացին աղքատ, միասն
խոսկանից կրկնապատիկ աւել է հաշուել,
երբեմն և երեքապատիկ աւել: Գիւղացին չէ
կարողանում ընդդիմադրել, հարկադրված է
համաձայնութիւն տալ: Բայց քրտեղից փող
գտնէ օղեհանին բաւարարութիւն տալու հա-
մար: Այդտեղ օղեհանը չտալով է «մարդա-
սիրութիւնից» օղեղ խեղճին նրա անելանելի
գրութեան մէջ, համաձայնվելով սպասել փո-
ղի վճարման մինչև միւս տարի և բարեկեցիկ
այդ գումարի վրա 20—25% տոկոս. ստա-
նում է մուրհակ և մի այլ թուրք թէ գիւղա-
ցին պարտաւոր է միայն իրան, օղեհանին,
ծախել այդու պտուղը:

Այդ քաղեցը նա այլ ևս օղեհան չէ, այլ
կատարեալ հոգեհան: Մի քանի տարի միմեանց
ետից անաշուղթիւնները և գիւղացին աւելի
և աւելի պինդ է կապվում իր համագիւղացի
հոգեհանին, և մի գեղեցիկ օր գալիս է դա-
տաւաստանի ծախողագիրը, թէ այս ինչ օրը պի-

ղնուրական հացի մի մեծ կտոր և, որովհետեւ
դանակը կտրեցի էր, սկսեց կրծելով ուտել
կամաց-կամաց:

Բայց մի քանի անգամ կրծելուց յետոյ նա
դադարեց ուտելուց. հացը կոշտ էր և դառնա-
համ: Իսկ թաղի հաց կարելի էր ունենալ միայն
միւս օրը, այն էլ եթէ պաշարեղէնի տեսչու-
թիւնը ուղիւ հաց բաժանել զօրքին: Ե՛հ, եր-
բեմն շատ ծանր պայտօն էր զինուորականութիւ-
նը: Եւ ահա նա ամառներում էր այժմ այն, ինչ
ինքը մի ժամանակ անուանում էր առողջապա-
հական նախաձայնիկներ, երբ, մի քիչ շատ ա-
րեւն տաքացնող ճաշի հետեւալ օրը, նա նըս-
տում էր Café Anglais-ի ներքին յարկի լուսա-
մուտներէն մէկի առաջ, պահանջում էր—էհ,
շատ քիչ բան, ես իմ Աստուածը—մի կողմէս
ու ծնեքեկով եղածու, իսկ սպասուորը, իմանալով
նրա սովորութիւնները, դնում էր սփռոցի վրա
և զգուշութեամբ բանում հին Լէօվիլի մի
ընտրի շիշ, մեղմելով պառկացրած դամբարանի
մէջ: Fichtre de fichtre! Լաւ ժամանակներ էր,
և նա չի ընտելանալ երբեք այս աղքատիկ հա-
ցին:

Եւ անհամբերութեան վայրկեաններից մէկում
երկտասարդը նետեց հացի մնացորդը գետնի մէջ:

Նոյն քաղեցն մի զինուոր գուրս էր գալիս
պանդոկից. նա կուցաւ, վերցրեց հացի կտորը,
հեռացաւ մի քանի քայլ, սրբեց հացը թխելով
և սկսեց խմել աղահորէն:

Անրի դը Լաբրոնը տրդէն ամօթ էր զգում

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՏԻ ԿՏՈՐԸ

(Փրանսուա Կօպէկից)

Ինչ Լաբրոնի երկտասարդ գուրսը գտնվում
էր Սալոնայում, Էքսի շրջանում, ուր բժշկում էր
իր հաշակաւոր Պէրլիշօլ մատակ ձին, որ
Դեբբիի արչաւում մրսելուց յետոյ ծանրաշնչա-
ցել էր: Նա վերջացնում էր նախաճաշը, երբ
մտամուր հայեացք զցելով լրագրի վրա, կար-
դաց յանկարծ Ռէյնսօֆֆէնի աղէտալի պար-
տութեան լուրը:

Նա պարպեց շարտեռի բաժակը, ձեռքերիչը
դրեց սեղանի վրա, պատուիրեց սպասուորին
կապկպել իր պարուսկները, երկու ժամ ան-
ցած նստեց Պարիզի ճեպքնմացը և, տեղ հաս-
նելով, վաղեց զինուորականութեան պաշտօնատու-
նը՝ կամաւոր գրվելու կոպող զօրքի գունդերից
մէկում:

Մարդ կարող է վարած լինել տանինը տա-
րեկանից մինչև քսանհինգը՝ մեղկացուցիչ
կեանքը փոքրիկ քոթէ՛—այն ժամանակվայ
բնորոշ խօսքերիցն էր այդ,—կարող է ապուշա-
ցած լինել ձիարշանների արտոններում ու օպե-
րէտային երգչուհիների առանձնարաններում,
բայց կան հանգամանքներ, երբ չէ կարելի մո-

ռանալ, որ Անգլեան դը Լաբրոնը մեռել է
ժանտախտից Տուրիսում՝ մի և նոյն օրը սուրբ
Լուիի հետ, որ ժան դը Լաբրոնը հրաժանա-
տար է եղել Դիւ Գելլէնի ձեռքի տակ և որ
Փրանսուա—Անրի դը Լաբրոնը սպանվել է
Փօնտրնուայում: Որքան էլ ուժասպառ եղած
լինէր երկտասարդ գուրսը իր խայտառակ
ու խիստ սիրահարութիւնից Nudités-Parisien-
nes խմբի պրիմադօննա Լիւսի վիդէտոնի
հետ, այնու աւմենայնու, երբ նա կարդաց այն
լուրը, թէ Փրանսուայից պարտութիւն են կրել
Փրանսիական հողում, արեւը խից գլուխը և
ապտակ ստացածի տպաւորութիւն զգաց նա:

Այդ էր պատճառը, որ 1870 թւին նոյնմերի
սկզբի օրերում, մտնելով Պարիզ իր զօրագնդի
հետ, Անրի դը Լաբրոնը իր վաշտի հետ պահ-
պանում էր շտապով ամրացրած Լօու-Քրիւլէր
ամրակայքը, որ պաշտպանվում էր Բիսէտր ամ-
բոցի թնդանօթներով:

Տեղագրութիւնը մաշկ էր.—մի աւելակոթներով
եղբրված ու ցեխոտ անուահետեւով խորխորա-
ված ճանապարհ, որ կտրում էր Պարիզի չրջակայքի
քոտոտ դաշտերը, և այդ ճանապարհի կողքին մի
թողնված պանդուխտ, որ զինուորները հաստատել
էին իրանց կայանքը: Այդտեղ կուր էր եղել մի
քանի օր առաջ. հրանօթները արձակած երկա-
թի բեկորները երկու կտոր էին արել մի քա-
նիսը մատաղատունկերից, որոնք բոլորը կրում
էին իրանց կեղևի վրա սպիտակ սպիներ հրա-
յին հարուածներ: Տուրը հօ սարսուռ էր աղ-
ղում իր տեղով. տանիքը ճաքել էր մի ռում-

տի ընծայի այս ինչ պարտքի դործը: Այժմ այլ
ևս ոչինչ չէ կարելի անել և գիւղացու ունեցած-
չունեցածը վաճառվում է:

Տողերիս գործը կարող է ներկայացնել շատ
փաստեր, որ շարունակ երկու-երեք տարվայ
ընթացքում մի և նոյն անձին այդու բերք
վաճառող գիւղացին վերջ ի վերջոյ պարտա-
կան է մնացել նոյն դուռը, որով առաջին
տարին ծախել էր իր այդու պտուղը:

Այսինքն, երկու տարվայ ընթացքում օղե-
հանը օգտվում է այդու թթից ձրի, իբրև տո-
կոս, իսկ առաջին տարին գիւղացուն տուած
փողը պարտք է, որը նա, ի հարկէ, կը ստանայ
անկողնուտ: Իսկ ինչ օգուտ ապրեալէր գիւղա-
ցուն: Եւ ոչ մի: Թէ է նա ունի ոսկի հողեր,
խիտ այգիներ, բայց տղրուկներ ձեռքով այն-
քան արնաքամ է դառել, որ այլ ևս ոչ մի դը-
րախտ չէ հրապարակում նրան և նա թողնում է
ամեն ինչ, լքանում է իր անտեսութիւնը ու
զիմում է որչի աշխատանք իր հայրենի հողից
շատ հեռու տեղերում: Զարմանք որ մեր
երկրի անտեսութիւնը շարունակ ընկնում է,
զարմանք, որ թանգութիւնը, արհեստական
թէ ըսական, բաց չէ թողնում մեր օձիքը...

*

Քանի որ խօսքը գիւղական ցուերի մասին է,
բերենք և մի այլ տխուր երևոյթ: Մենք շատ էլ
զոհ լինել չենք կարող մեր գաւառների առող-
ջական դրութիւնից: Շատ անգամ ենք արձա-
նադրել այս տղերքում այն անտեսութիւնը, ո-
րին մատնված են մեր երկրի խոլ անկիւնները
և գիւղացի բժշկական օգնութեան անսակէտից:
Սովորական բան է, որ անաղիւս տարածութիւն-
ներ տարին տասն երկու ամիս բժշկի երես
չեն տեսնում և հիւանդները միտում են դահիճ
«հեքիմներ» ձեռքին: Հարց է. կարող են միան-
գամայն զոհ լինել և այնպիսի սակաւթիւ տե-
ղեր, ուր բժիշկներ կան: Այս հարցին բացա-
սական պատասխան է տալիս բժիշկ Վակաչիձէ
«НОВ. ОБЗОР» լրագրի մէջ: Գաւառներում փորձ-
ված բժիշկներ համարեալ թէ չը կան: Այդտեղ
ուղղորդվում են համալսարանի նոր աւարտած
և ոչ մի փորձ չունեցող բժիշկներ. և որքան
էլ հարուստ լինի համալսարանից նրանց դուրս
բերած թէօրիան, այնու ամենայնիւ նրանք շատ
և շատ դէպքերում չեն կարողանում մի բան
անել, լքանի որ փորձ չունեն: Փոքր ի շատ
փորձված բժիշկները հեշտութեամբ տեղ են ծա-
րում քաղաքներում և ինչպէս պիտի գնան գիւ-
ղերը: Եւ սակայն գաւառը մանուշակ շատ է
հիւանդանում:

Հիւանդանում է այն պատճառով, որ աղ-
քատութիւնը և նրա հետ կապած առողջապա-
հական վատ պայմանները ամենանպաստաւոր
պայմաններ են ստեղծում ամեն տեսակ հիւան-
դութիւնների համար: Բացի դրանից, խոլ ան-
կիւնների բնակիչները մի քիչ անվստահու-
թեամբ են վերաբերվում բժշկին: Եւ այս
դէպքում դժուար է մեղադրել բնակիչներին,
դժուար է մեղադրել և բժիշկներին: Այն սար-
սափելի պայմանների մէջ, որոնցով չըթա-
պատված են հիւանդները, գիւղական բժիշկը
պիտի գործ ունենայ բոլոր մասնագիտու-
թիւնների հետ: Իսկ այս վերջին բանը դը-
ժուար է կատարել, որովհետեւ կարիքը բուն
է բժիշկին դէպի գաւառ ուղղակի համալսա-
րանական նստարանից և շատ յաճախ գործ-

իր արածից և կարեկցութեամբ դիտում էր այդ
խեղճ մարդուն, որ այդպիսի հիւանդի անորժակ
էր ցոյց տալիս: Դա մի բարձրաստակ ու յաղ-
թանդամ տղայ էր, բաւական վատ կազմված,
տենդուտի աչքերով ու հիւանդանոցի մօրեւորով
և այնքան ծնարար, որ մէջքի թիակները դուրս
էին ցցվում անշնչաբար վերաբերվել մահուկի տա-
կից:

— Կարգին քաղցած ես երևի, մեր տղայ, ա-
սեց դուքը, մօտենալով զինուորին:

— Ինչպէս տեսնում ես, պատասխանեց սա,
բերանը վրէ:

— Ներքի, խնդրեմ: Եթէ իմանայի, թէ իմ հա-
ցի կտորը կարող է պէտք գալ քեզ, դետին չէի
զցի:

— Բան չը կայ, ոչինչ, առարկեց զինուորը: Ես
այնքան էլ զգուշանալից չեմ:

— Մի և նոյնն է, ասեց ազնուականը, արածս
վատ բան է և խիղճս տանջում է ինձ: Բայց
ես չեմ ուզում, որ դու վատ կարծիք կազմես
իմ մասին, և որովհետեւ ինի կօնեակ ունեւմ
մօտս... parbleu! եկ իմանա՛ք միասին:

Զինուորը վերջացրել էր ուտելը: Դուքսն ու
նա խմեցին մի-մի կօնեակ. ծանօթութիւնը
արված էր:

— Ինչպէս է անունդ, հարցրեց զինուորը:

— Հարգվածս, պատասխանեց դուքը, դէն
զցելով արտօսը և յօղը... Իսկ զին:

— Ժան-Վիկտոր... Այսօր միայն ինձ յետ ու-
ղարկեցին վաշտը... Հիւանդանոցում էի...

հական գիտելները կատարեալապէս բացա-
կալում են:

Անյարմարութիւնները վերացնելու համար
անհրաժեշտ հարկաւոր է, որ խոլ անկիւնները
ուղարկվեն այնպիսի բժիշկներ, որ հիւանդա-
նոցներում տարիների փորձ են ունեցել: Նոյն
իսկ համալսարանական ուսման մասին խօսելով,
յօղուածագիրը չէ թաղցնում, որ ռուսաց բը-
ժիշկական ֆակուլտետները շատ քիչ գործնա-
կան գիտութիւններ են տալիս, այնպէս որ խոլ
անկիւններում կարելից ստիպված բժշկութիւն
անողները կապված են ոտ ու ձեռքով: Շատ
քիչ մասնագէտներ են լինում գաւառներում,
իսկ ամուղղ բժշկական գիտութիւնը նոյն իսկ
հարեանցօրէն իմանալու համար չը կայ: Եւ ահա
այդ ցաւալի իրականութեան դէմ յօղուածագիրը
խորհուրդ է տալիս, որ գաւառական բժիշկները,
նախ քան պաշտօնի ուղարկվելը, առժամանակ
մնան Քիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում՝
փորձաւարութիւն ձեռք բերելու համար: Դա, իսկ
որ, շատ ցանկալի կը լինէր: Պակասութիւնը
զոհ է մատուցել վերացնելիս էլ մի օգուտ է, որից
չը պէտք է դրել: Եւ գիւղի աղքատութիւնը...

ՆԱՄԱԿ ԿԱՐՈՒՑ

Յուլիսի 15-ին

Այսօր, առաւօտեան ժամը 11-ին, նշանակված
էր Կարս-Քիֆլիսի երկաթուղու մարդատար
գնացքի պաշտօնական մուտքը Կարս: Կայարանը
և գնացքը դարձրված էին դրօշակներով: Կա-
յարանի մուտքի ճակատին դրված էին վենդը-
ներ Կայսրի անունին: Առաւօտանից ամբողջ
քաղաքը հաւաքվել էր կայարանի մօտ և անհա-
բերութեամբ սպասում էր գնացքի գալու: Երբ
հեռուից լսվեց շողեկաւոր սուրընդ, նահանգա-
պետը, մի քանի բարձրաստիճան ժողովանց հետ,
գնաց ընդառաջ: Ճանապարհի մի ակից մինչև
միւս ակի երկարացրած էր մի ժապաւէն, որին
հասնելուն պէս գնացքը կանգ առաւ: Երկար-
չափներն լվան, պաշտօններից և ներկայացան
նահանգապետին: Տրիկին Վոսանտովիչ կարեց
ժապաւէնը. նահանգապետը մուրճով խփեց
դուրս ցցված մօխը և գնացքը, խուռն բազմու-
թեամբ չըթապատված, շարժվեց դէպի կայարանը:
Շողեկաւորն առաջին պատշաճութեամբ հաւաքված
օճիցներին երգում էին «Вожо Царя Храни»...
ռուսական հիմնը:

Կայարանի առաջ, վրանների տակ, հողերու-
կանութիւնը մաղթանք կատարեց և ապա քա-
ղաքացիները, երկաթափները ու մի քանի ուրիշ
հիւրեր ներս մտան: Կայարանի կիսալէն դահլիճը,
ուր քաղաքացիների կողմից նախաճաշ էր պատ-
րաստված, շապաւանայի բաժանիքը վերցրած՝
պ. նահանգապետի առաջարկութեամբ, խմեցին
Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր
Կայսրի, Թագուհի Կայսրուհու, Թագածուհու, ին-
քանիսն փոխարքայ և Մեծ Իշխան Միխայիլ
Նիկոլայիւիչի, Կովկասի կառավարչապետ իշխան
Իոլիցինի և մի քանի ուրիշ կենսացներ, որոնցից
իւրաքանչիւրը ժողովուրդը ընդունում էր ռուսա-
ներով: Հիւրերի մէջ աչքի էր ընկնում իշխան
Արեալի, որի առաջարկութեամբ, ի դիմաց
Քիֆլիսի նահանգի ազնուականների, առաջարկ-

վէք էի ստացել Շատիլյոնում... Այն, շատ
լաւ էր հիւանդանոցում. ձիււ մից հիւանդի ա-
պուր էին տալիս այնտեղ... Բայց իմ վէքս հա-
նարակ քերծուածք էր. մայօրը ստորագրեց
դուրս գալու թուղթը, և ահա էլի սկսելու եմ
սովից զիւտուալ... Հաւատաւոր, չը հաւատաւոր, եղ-
բայր, ճիշդ եմ ասում, ես սոված եմ եղել ամ-
բողջ կեանքումս:

Սովալի խօսք էր այդ, ասված մի հեշտասե-
րի, որ մի փոքր առաջ ամիստանքով յիշում էր
Café Anglais-ի կերակուրները: Դուքը նայեց
իր խօսակցին դարձապէս և գրեթէ սարսափած:
Զինուորի երեսին երևաց դառն ժպիտ, որ բաց
արեց նրա ատամները, սովատանջ գալի ա-
տմենք, սիփ-սպիտակ այդ ահելի դէմքի մէջ,
և նա, կարծես հասկանալով, որ իրանից դադո-
նիքի վստահում են սպասում:

— Եկէ՛ք, ասեց, դադարելով յանկարծ դու-
ղուելուց (tukoyer) իր ընկերին, գուշակելով ան-
շուշտ, որ երջանիկ և հարուստ մարդ է նա,—
եկէ՛ք մի փոքր ման գանք ճանապարհի վրա՝ ոտ-
ներու տարացնելու համար, և ես այնպիսի բա-
նիք պատմեմ ձեզ, որ դուք անշուշտ չէք լսել
երբէք... Իմ անունն է Ժան-Վիկտոր, միմիայն
Ժան-Վիկտոր, առանց հօրանունի, որովհետեւ ես
ընկեցի երեսայ եմ, և իմ միակ քաղցր յիշ-
գութիւնը առաջին ժանկութեան ժամանակն է՝
ապատարանում: Սաւանները սպիտակ էին մեր
փոքրիկ անկողնիներում, ննջարանում, մենք
խաղում էինք պարտէզում՝ մեծ-մեծ ծառերի

վեց երկաթուղու գծի վրա բոլոր աշխատաւոր-
ների կենացը: Երկրորդ դահլիճում սեղան էր
պատրաստված երկաթուղու ստորին ծառայող-
ների համար: Այսօրվանից սկսվում է երթու-
նութիւնը, առ այժմ շաքաթական երկու
անգամ:

Առաւօտեան, զեռ գնացքը չեկած, անձնասպան
եղաւ: Կարսից մինչև Ալեքսանդրօպոլ կայարան-
ներ և այլ շինութիւնների կապալաւու Յարու-
թիւն Ռափայէլեանը, որը յայտնի էր իր գործի
մէջ իբր բարեխիղճ և ազնիւ մարդ: Որչափ շինու-
թիւններ վերցրել էր, ամենի միջից պատուով էր
դուրս եկել և գովասանքներ ստացել: Նրա կա-
ռուցած շինութիւններից աչքի են ընկնում մա-
նաւանդ Սարիղամիշի գործի համար շինած
բազմաթիւ և հոյակապ ձեւաւորումները: Նրա
բարեխիղճութիւնն այն աստիճանի էր հասնում,
որ վարպետներն ուրախութեամբ նրա մօտ ա-
ւելի պակասով էին ծառայում, քան մի ուրիշ
մօտ՝ աւելով: Սպանութեան պատճառը զեռ ես
անյայտ է. միայն ասում են, որ նա զիմել է
այդ քայլին, որովհետեւ երկար ժամանակ իր շի-
նածները համար դանձարանից փող չէ ստա-
ցել, որի համար ամենահարգանք արհեստա-
ւորներն անգամ սկսել են տրտնջել և ան-
պատուել նրան. իսկ ինքը չը կարողանալով
տանել այդ վրաւորանքը՝ լաւ է համարել ատը-
նակի մի հարուածով վերջ տալ իր կեան-
քին, քան իր համար անսովոր դանդաղանքն ու
վրաւորանքները տանել: Հաւանական է, նա
նախաձեռնել թողած լինի, որոնք կարող են պար-
զել սպանութեան բուն պատճառները: Ահպին
հաշիւներ են մնացել վարպետների և խանութ-
ների հետ դեռ չը վճարած:

Երկար ժամանակ անձրեւ չը գալուց Կարսի
չըջանում արտերը սաստիկ վնասվեցին և ալիւ-
րը բարձրացաւ մինչև 1 բ. 60 կօպէկ, իսկ հա-
ցի ֆուտը 3 1/2 կօպ: Դարձան սկզբին, առատ
անձրեւների չնորհիւ, բերքը լաւ յոյս էր տալիս,
բայց այդ ամենն ի դեռեւ լաւ, և շատերի վի-
զը ծուռը մնաց: Թէ և Կարսի չըջանում բերքը
վատ է, բայց հաւանականօրէն առանձին դեպ-
քի աղքեցութիւն դժուար թէ անի ապագայի
վրա, որովհետեւ թէ հին ցորեն շատ կայ և թէ
մնացած մասերում համեմատաբար բերքն աւե-
լի լաւ է, թէ և նրան էլ բաւական վնասել է
նոյն երաշտը:

Հ. Նորատեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մի քանի օր Քիֆլիս քաղաքի ժողովուրդը
բաւական դժուարութիւններ ընչեց ջրի պակա-
սութեան պատճառով: Այժմ, ըստ երևոյթի, ջրի
կողմից քաղաքը ապահովված կը լինի: Գա-
ղաքային ուղարկման իր ճարտարապետների հետ
միասին ձեռք առաւ մի շարք միջոցներ և այժմ
ջրի պաշարը աւելանում է թէ այն պատճա-
ռով, որ պատնէշներ են կառուցվում և թէ նոր
ուժեղ շողեղաբծ մեքենայ դնելու պատճառով:
Երէկ, յուլիսի 19-ին ջրանցքը բաժանել է քա-
ղաքին 595,000 վեդրօ ջուր, իսկ նախորդ օրե-
րը 80—100 հազար վեդրօ պակաս էր լինում:

Պրօֆէսոր Իօկուչանով, որ ուղևորվել է Ալեք-

տակ, և այնտեղ կար մի բարի ընդիրկ, մա-
տաղահաս, մեղքածովի զոյնով—խեղճը հալ-
վում էր թղթախորից—որի սրելին էի ես և ո-
րի կողքին դերադասում էի ման գալ, քան խա-
ղալ միւս երեխաների հետ, դահլիճս նա
ինձ սղծում էր իր շրջապահներին, դնելով ձա-
կասիս իր նիշաք ու տաք ձեռքը... Բայց տասն-
երկու տարեկան հասակիցս, առաջին հաղորդու-
թիւնիցս ի վեր, ոչինչ չեմ տեսել՝ բացի թղթա-
ւորութիւնից: Ապաստարանի վարչութիւնը ինձ
աշակերտութեան էր տուել մի յարգէ ամիսներ
նորոգող վարչապետի մօտ, Ահմ-Ժակ արուարձա-
նում: Մի արհեստ չէ դա, ձեռք ասեմ. դուրս
պահել չէ կարելի դրանով. բաւական է ասել,
որ մեր վարպետը աշակերտ կարողանում էր ճա-
րել միայն կոյրերի ապաստարանից դուրս եկող
խեղճ աղքատների մէջ: Ահա այդտեղ սկսեցի ես
տանջվել սովից: Վարպետս ու կինը—երկու
ձեռ լիմուղէնացիներ, որոնց յետոյ սպանեցին,—
սարսափելի ծայա մարդիկ էին և հացը, որից
փոքրիկ-փոքրիկ կտորներ կտրում տալին էր
մեզ վարպետի կինը կնոսքին, կողպէքի տակ էր
պահվում մնացած ժամանակը: Եւ պէտք էր տես-
նել նրան երկույնս իր սև գլխանոցով, երբ
ընթերցի ժամանակ ապուր էր տալիս մեզ, հա-
ռաչանք արձակելով ամեն անգամ չերեփը ապ-
րանքի կոխելիս... Միւս երկու աշակերտները
կոյրերի ապաստարանից էին և աւելի քիչ ան-
բախտ՝ քան ես. ինձանից շատ չէին ստանում
նրանք, բայց նրանք չէին տեսնում զոհն այդ

սանդղապոյից դէպի Արարատ սարը տեղական
հողի տեսակները ուսումնասիրելու նպատակով,
այս օրերս սպասվում է Քիֆլիսում, որտեղից
նա պէտք է ուղևորվի դէպի Դաղստան: Նրա
արշաւախմբին պատկանող երկու անդամները, կա-
տարելով Լոռու գաւառամասի, Նոր-Բաղաղէտի և
Շուշու գաւառների հետազոտութիւնը, վերադա-
նել են Քիֆլիս և ուղևորվում են Լենքորանի և
Ղուբալի գաւառները շարունակելու իրանց ու-
սումնասիրութիւնները: Մենք մի համառօտ
տեղեկութիւն կը տանք այդ հետազոտութիւն-
ների մասին յաջորդ անգամ:

Քիֆլիսի քաղաքային ուղարկման, մի յատուկ
յանձնաժողովի հետ, մանրամասն ընկնելով ծախ-
վող անասունների և նրանցից ստացված մսի
քանակութիւնը, եկաւ այն եղրակացութեան,
որ պէտք է մսի գինը իջեցնել և սահմանել թէ
առաւարի և թէ ոչխարի մսի համար ֆունտին 7
կօպէկ գին:

«Торговопромышленная Газета» լրագրից հա-
ղորդում է հետեւեւ երեք նոր ընկերութիւնների
մասին, որ կազմվում են Բագուի շրջանում.
1) Քիչապարված է բեղիկական մի ընկերու-
թիւն 4 միլիոն ֆրանկ ինիսական դրամազլիով,
«Анонимное общество биологических нефтяных
промыслов» կամ ֆրանսերէն՝ «Pétroles de
Binagady, société anonyme»: 2) Կազմվում է
«Գարաշուշի» նաւթագործական և առևտրա-
կան ընկերութիւն 2 միլիոն ռուբլի հիմնա-
կան դրամազլով, բաժանված 4000 ալի-
ցիայի: Հիմնողներն են՝ Յ. Մատուրեան, Ն. Պա-
րոնեանց, Ա. Ալեքսանդրեան և Ի. Վեդրեզեան:
3) Հիմնվում է «Բախտ» անունով նաւթագոր-
ծական և առևտրական ընկերակցութիւն
600,000 ռուբլի հիմնական դրամազլովով, բա-
ժանված 2,400 ալցիայի: Հիմնողներն են՝ գիւ-
ղատնտես Լ. Պարոնեանց և Մ. Բեղլեարեան:

Ստացանք մի բքօշիւր, որ պարունակում է
իր մէջ գատողութիւններ Մցխեթի մայր եկե-
ղեցու տանիքը ծածկելու եղանակի մասին: Բքօ-
շիւրը, որ կրում է «Какъ лучше покрыть Мххет-
ский патриархій соборъ» վերնագրից, բաղկա-
ցած է փղբարդի 16 երեսից և արժէ 10 կօպէկ:

ՂՈՒԲԱՅԻՏ մեղ գրում են. «Մօտ երկու ամիս
է, որ անձրեւի երես չենք տեսնում. վերջին օ-
րերս բաւական տաք եղանակներ է անում մե-
զանում ցերեկով, իսկ գիշերները խիստ հով,
մինչև անգամ ցուրտ: Անձրեւ չը գալու պատճա-
ռով մեր գաւառում կը վնասվի զլխաւորապէս
բրնձի բուսականութիւնը. չաղիկները (խիւ)
չորացել են և, ինչպէս ասում են, այս տարի
բրնձ սակաւ կը լինի, այն ինչ խաղողը շատ
աղող է հասնում և քաղցր է. ուրեմն այս և
տարի գինիներ մենք կունենանք լաւ տեսակի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅՐԱՆՍԻԱՅԻՏ

Պարիզ, յուլիսի 20-ին

Յուլիսի 14-ի աղպային մեծ տօնը համարեա
ամբողջ Պարնսիայում անցաւ կատարեալ խա-

չարասիրտ կնոջ յանդիմանական հայեացքը, երբ
նա մեկնում էր մեղ մեր ամուսին... Եւ հակառակի
նման, մեծ անորժակ ունէի արդէն: Այդ էլ 50 իմ
մեղքս չէ... Երեք տարի աշակերտ մնացի այնտեղ
և շարունակ սոված էի լինում... Երեք տարի:
Արհեստը մի մասունք է սովորվում. բայց ապա-
սարանի վարչութիւնը չէ կարող իմանալ ամեն
բան և չէ կասկածում, թէ կարող են հարստա-
հարեւ երեխաներին... Դուք դարձաք, չէ, տես-
նելով, որ հացի կտորը վերցրել ցելից: Եւ, ես
սովոր եմ այդ բանին. ես շատ եմ հաւաքել հա-
ցի փշուրներ աղբի մէջից, և երբ շատ կոշտ
էին լինում նրանք, ամբողջ գիշերը թողնում էի
փափկեն լուացվելու լազանիս մէջ... Լաւ պա-
տաններ էլ էր ուղարկում երեքին Աստուած.
աշակերտները դպրոցից դուրս գալիս հանում
են իրանց դամբալից կրծոտած հացի կտոր-
ներ ու հցում մայթի վրա: Ես աշխատում էի
այդ կողմերով անցնել, երբ տեղ էր ուղարկում
ինձ վարպետս... Իսկ յետոյ, երբ աշակերտու-
թեան ժամանակը լրացաւ, ես այնպիսի ահեստ-
տի տէր դարձայ, որ, ինչպէս ասեցի ձեզ, հաց
չէ կարող տալ մարդու: Ուրիշ արհեստներ էլ
սովորեցի, ինքս էլ ժիւր եմ աշխատանքի մէջ:
Փ

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.